ՆԱՏՕ-Ի ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ *

ՀՏԴ [327+327.7] *DOI: 10.52063/25792652-2025.2.25-141*

ՄՀԵՐ ՇԻՐԻՆՅԱՆ
Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
m.a.shirinyan@mail.ru
ORCID: 0009-0006-4735-7834

Հայաստանի Հանրապետության արտաքին բազմակողմ անվտանգության տեսագործառնական հիմքերի համեմատական գնահատման դիսկուրսում ՆԱՏՕ-ին վերաբերող արդի զարգացումների շրջանակներում նախևառաջ ընդգծվում է, որ Խորհրդային Միության փլուզումից հետո նախկին խորհրդային երկրներից շատերն անվտանգության նոր համակարգերի փնտրտուքի ժամանակ ստիպված էին ընդունել Ռուսաստանի առաջարկած տարբեր ֆորմատները, առաջին հերթին՝ ԱՊՀ-ի ռազմաքաղաքական բլոկը, ապա Արևելյան Եվրոպայի և Բալթյան երկրների համար այն կտրուկ անընդունելի էր: ՆԱՏՕ-ն սկսեց աստիճանաբար ընդլայնվել դեպի արևելք՝ գործընկերության տարբեր ձևաչափեր առաջարկելով նաև ողջ հետխորհրդային տարածքին, այդ թվում՝ Հարավային Կովկասի, Կենտրոնական Ասիայի երկրներին, անգամ՝ Ռուսաստանին:

Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունը ժամանակակից աշխարհի ամենագործուն ռազմաքաղաքական կառույցն է: Ըստ էության, ՆԱՏՕ-ի հիմնարար նպատակն է պաշտպանել իր բոլոր անդամների ազատությունն ու անվտանգությունը: ՆԱՏՕ-ն ոչ միայն օգնում է պաշտպանել իր անդամ երկրների տարածքները, այլ նաև համագործակցում է, որտեղ հնարավոր է և անհրաժեշտ է, ընդլայնելու իր արժեքները իր տարածքից դուրս, կանխելու և կառավարելու ճգնաժամերը, կայունացնելու հետկոնֆլիկտային իրավիճակները և աջակցելու վերակառուցմանը: Հետևապես, ՆԱՏՕ-ի ընդլայնումը մեծացնում և հստակեցնում է իր առաջատար դերը ոչ միայն Արևմուտքում, այլև Արևելքում, և այն փաստացի բավականին հաջող է ստացվում: Նրանք փորձում են գրեթե ողջ աշխարհում իրենց ներկայությունը ապահովել և տարածել, և դրա լավագույն տարբերակը ընդլայնումն է, որի ժամանակ նրանք փորձում են «սիրաշահելով» այլ երկրների գրավել իրենց կողմը՝ առաջարկելով ռազմական, տնտեսական և այլ օգնություններ: Իրենց դիրքերը ավելի ամրապնդելու համար ՆԱՏՕ-ն իր ընդլայնման քաղաքականությունը դեռ երկար կկիրառի:

Սույն հոդվածի նպատակն է վերլուծել ՆԱՏՕ-ի ընդլայնման քաղաքականությունը և դրա իրականացման նպատակը, երկրների անդամակցման ընթացքը և այն, թե ինչ փուլերով են դրանք ընթացել, ընդլայնման կարևորությունը տարածաշրջանի և երկրների համար, ինչպես նաև այս համատեքստում գնահատել ՀՀ անվտանգային շահերը և

* Հոդվածը ներկայացվել է 01.07.2025թ., գրախոսվել՝ 22.07.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.09.2025թ.:

դիրքորոշումը՝ ընդլայնման քաղաքականությամբ պայմանավորված զարգացումների նկատմամբ:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝ գնահատել ՆԱՏՕ-ի կարևորությունը հետսառըպատերազմյան աշխարհում, վեր հանել ՆԱՏՕ-ի ընդլայնման քաղաքականության պատճառները, վերլուծել Ռուսաստանի դերը ՆԱՏՕ-ի ընդլայնման գործընթացում, ինչպես նաև ուսումնասիրել ՆԱՏՕ – Ռուսաստան հարաբերությունները և Եվրոպայում նոր անվտանգային միջավայրի զարգացումները:

Սույն աշխատանքում օգտագործվել են պատմական, վերլուծական, համեմատական, դեդուկտիվ մեթոդները: Պատմական մեթոդը կիրառվել է ներկայացնելու համար ՆԱՏՕ-ի ընդլայնմանն ուղղված գործունեությունը 1999-2024թթ., վերլուծական մեթոդով ներկայացվել է ՆԱՏՕ-ի ընդլայնման նպատակները, երկրների անդամակցության պատճառները, համեմատական մեթոդը կիրառվել է ՆԱՏՕ-ի ընդլայնման բոլոր փուլերը ուսումնասիրելու ընթացքում՝ հասկանալու համար տարբեր եկրների անդամակցման պատճառները, իսկ դեդուկտիվ մեթոդը կիրառվել է ընդլայնման արդյունքները, ՆԱՏՕ-ի նախատեսած քաղաքականության տարածումը և հաստատումը տարածաշրջանում և ՀՀ անվտանգային համակարգը գնահատելու համար:

Հոդվածում ներկայացված վերլուծության արդյունքում գնահատվել է, որ ՀՀ-ի անվտանգության դիրքերից ՀՀ-ՆԱՏՕ հարաբերությունների տեսագործնական զարգացումները կարելի է առանձնացնել հետևյալ ռազմավարական ուղղություններով.

1. *Հարաբերությունների զարգացումն այդ կազմակերպության հետ օբյեկտիվորեն բխում է ՀՀ շահերից, մասնավորապես՝ անվտանգության ոլորտում բազմազանեցման ու ենթաոլորտների տարանջատման առումներով:*
2. *ՀՀ-ին հնարավորություն է տալիս արտաքին քաղաքականության հարթակում ևս հարաբերություններ կառուցելու եվրոպական ու ատլանտյան առաջատար երկրների հետ. յուրացնելու անվտանգության ու ռազմական պլանավորման ոլորտում նրանց դրական փորձը:*
3. *ՀՀ ռազմաքաղաքական բարեփոխումների ոլորտներում կատարվում են հմտությունների փոխանցում, ուսումնառության, սպայական ու հրամանատարական կազմի համար վերապատրաստումներ:*
4. *Դաշինքի հետ համագործակցությունը լրացնում է ՀՀ-ՌԴ անվտանգային գործակցության օրակարգից դուրս մնացած ոլորտները:*
5. *Այդ գործակցությունը ՀՀ-ին հնարավորություն է տալիս էլ ավելի գործուն դերակատարում ունենալու միջազգային անվտանգության ճարտարապետության տեղային դրսևորումներում, և դրանով իսկ հիմք է ստեղծում խաղաղապահ բրիգադների փորձառություն ձեռք բերելու համար:*
6. *Հատկապես ԱԳԳԾ բաղադրիչը կանոնակարգում է ռազմաքաղաքացիական հարաբերությունները, ուրվագծում է բանակում կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարը, առավել արդյունավետ է դարձնում անվտանգության ու ռազմապաշտպանական ոլորտներում հանրային իրազեկումը, գործուն աջակցություն է ցուցաբերում հայեցակարգային փաստաթղթերի պատրաստմանը, նոր տեխնոլոգիաներ, հմտություններ փոխանցում և իրականացնում խորհրդատվություն կիբերանվտանգության ոլորտում և առավել արդյունավետ դարձնում ճգնաժամային կառավարման գործիքակազմը:*

Հայաստանը, մասնակցելով ՆԱՏՕ-ի խաղաղապահ առաքելություններին, ինչպես նաև այլ միջոցառումների, իր աջակցությունն է ցույց տալիս ԱՄՆ-ին և Եվրոպային՝ լավացնելով ու բարձր մակարդակի հասցնելով հարաբերությունները նրանց հետ: Հայաստանը ներկայումս քաղաքական նպատակայնություն է պահպանում ակտիվացնելու գործնական և քաղաքական համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ՝ դաշինքի հետ առավել մերձեցման նպատակով, միևնույն ժամանակ, երկրի արտաքին քաղաքականության դիսկուրսի վերլուծական գնահատմամբ՝ Երևանն իր անվտանգային քաղաքականության շրջանակներում դեռևս հստակ ու արտահայտված նպատակ չի դնում անդամակցելու Հյուսիսատլանտյան դաշինքին:

Հիմնաբառեր՝ *անվտանգություն, ընդլայնում, տարածաշրջան, հավաքական պաշտպանություն, պաշտպանական քաղաքականություն, կարողություն, սպառնալիք, վտանգ, հակամարտություն:*

Ներածություն

Նոր աշխարհակարգի և ՆԱՏՕ-ի ընդլայնման քաղաքականության էվոլյուցիան ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում, որ հետսառըպատերազմյան ժամանակաշրջանը բնութագրվում էր աշխարհաքաղաքական տեղաշարժերի, գաղափարական լարվածության և իշխանության համար պայքարի բարդ փոխազդեցությամբ: Հետադարձ հայացքով. ՆԱՏՕ-ի՝ դեպի Արևելք ընդլայնման ճանապարհը, որը բխում է Բեռլինի պատի փլուզումից մինչև Ֆինլանդիայի և Շվեդիայի միացումը, վկայում է դիվանագիտության և համագործակցության ուժի մասին՝ եվրոպական անվտանգության ձևավորման մասին: 1989թ.-ի պատմական իրադարձությունները նշանավորեցին նոր դարաշրջանի սկիզբը, որը խորհրդանշում էր Գերմանիայի վերամիավորումը ՆԱՏՕ-ին՝ չնայած Մոսկվայի նախնական մտավախություններին և դիմադրությանը (McCalla 2024):

Քանի որ Եվրոպայի քաղաքական շրջանակը աճում էր, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների ձգտումները՝ ինտեգրվելու արևմտյան կառույցներին՝ ներառյալ ՆԱՏՕ-ին, գնալով ավելի ակնհայտ էին դառնում: Խորհրդային Միության փլուզումը և Վարշավայի պայմանագրի լուծարումը ճանապարհ հարթեցին նոր հնարավորությունների և մարտահրավերների համար, ինչը դրդեց գնահատել ՆԱՏՕ-ի դերը հետսառըպատերազմի դարաշրջանում:

Քլինթոնի վարչակազմի հավատարմությունը ՆԱՏՕ-ի ընդլայնմանը ի վերջո հանգեցրեց քաղաքական փոփոխությունների Դաշինքի ներսում: Չնայած ՆԱՏՕ-ի անդամ երկրների միջև բանավեճերին և տարաձայնություններին՝ 1997թ. Մադրիդի գագաթնաժողովը ավարտվեց Լեհաստանի, Չեխիայի և Հունգարիայի՝ Դաշինքին միանալու հրավերով (The Accession of Poland, the Czech Republic and Hungary to NATO 2021): 1999թ. այս երեք ժողովրդավարական երկրների միանալը ազդարարեց ոչ միայն ՆԱՏՕ-ի աշխարհագրական հասանելիության ընդլայնումը, այլև նրա զարգացող առաքելությունը՝ ուղղված Եվրատլանտյան տարածաշրջանում առաջացող անվտանգության սպառնալիքներին: ՆԱՏՕ-ին անդամակցելու դուռը բաց մնաց՝ վերահաստատելով ժողովրդավարությունը և համագործակցությունը ողջ Եվրոպայում:

2004թ. Բալթյան երկրների անդամակցությունը ՆԱՏՕ-ին նշանակալի իրադարձություն է տարածաշրջանի անվտանգության և եվրոպական աշխարհաքաղաքականության համատեքստում: Միացյալ Նահանգները առանցքային դեր խաղաց մերձբալթյան երկրների անկախության և ՆԱՏՕ-ի վերջնական անդամակցության ձգտումներին աջակցելու գործում, ընդ որում և՛ Քլինթոնի, և՛ Բուշի

վարչակազմերը նպաստում էին այս գործընթացին: 2001թ. Վարշավայում ելույթ ունենալու ժամանակ Բուշը չպաշտպանեց Բալթյան երկրների մուտքը ՆԱՏՕ, սակայն նրա հղումը «Բալթիկից մինչև Սև ծով» ենթադրում էր ընդլայնում, որը կներառեր նաև Բալթյան երկրները: Չնայած սկզբնական տարակարծությանը՝ Բուշի վարչակազմն ի վերջո ընդունեց ՆԱՏՕ-ի ընդլայնման գաղափարը՝ ներառելով Բալթյան երկրները: 2002թ. Պրահայի գագաթնաժողովը շրջադարձային էր, որտեղ ՆԱՏՕ-ի ղեկավարները հաստատեցին իրենց համաձայնությունը դաշինքում ողջունելու Բուլղարիային, Էստոնիային, Լատվիային, Լիտվային, Ռումինիային, Սլովակիային և Սլովենիային (Prague Summit Declaration 2014):

ՆԱՏՕ-ի ընդլայնումն ընդգծում էր անդամ երկրների միջև տարածված ազատության և ժողովրդավարության մնայուն արժեքները՝ միաժամանակ աշխարհաքաղաքական առավելություններ տալով ՆԱՏՕ-ի՝ հակամարտությունների տարածքներում զորքեր տեղակայելու կարողության համար: Ավելին՝ անդամակցության գործընթացը դրդեց Մերձբալթյան երկրներին ձեռնարկել էական բարեփոխումներ պաշտպանության և անվտանգության ոլորտում: Այս ընդլայնումը նաև խթանեց Եվրամիության ներսում քննարկումները սեփական անվտանգության ռազմավարության վերաբերյալ, ինչը հանգեցրեց Եվրոպական անվտանգության ռազմավարության զարգացմանը և Եվրոպական անվտանգության և պաշտպանության քաղաքականության ամրապնդմանը:

Քանի որ ՆԱՏՕ-ի դուռը բաց մնաց եվրոպական այլ ժողովրդավարական երկրների համար, ընդլայնման գործընթացը ընդգծեց դաշինքի հարմարվողականությունն ու համապատասխանությունը զարգացող անվտանգության միջավայրում: ՆԱՏՕ-ի ընդլայնման գործընթացը շարունակվեց 2009 թվականին Խորվաթիայի և Ալբանիայի անդամակցությամբ՝ հետագայում ձևավորելով եվրաատլանտյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական շրջանակը (Albania, Croatia join Nato alliance 2009): 2008 թվականի Բուխարեստի գագաթնաժողովը նշանակալից էր: ՆԱՏՕ-ի առաջնորդները հրավերներ ուղարկեցին Խորվաթիային և Ալբանիային՝ սկսելու անդամակցության բանակցությունները (Bucharest Summit Declaration 2022): Այս որոշումը ընդգծեց ՆԱՏՕ-ի հանձնառությունը Հարավարևելյան Եվրոպայում անվտանգության և կայունության ամրապնդման հարցում՝ միաժամանակ ընդունելով երկու երկրների կողմից ձեռնարկված կարևոր քաղաքական և ռազմական բարեփոխումները:

Այնուամենայնիվ, ՆԱՏՕ-ի ընդլայնման գործընթացը զերծ չէր իր մարտահրավերներից, մասնավորապես՝ ՆԱՏՕ-Ռուսաստան հարաբերությունների համատեքստում: ՆԱՏՕ-ի ընդլայնումը նախկին Արևելյան բլոկի երկրներում և կովկասյան տարածաշրջանում մեծացրեց Ռուսաստանի հետ լարվածությունը: Ռուսաստանը ընդլայնումը դիտեց որպես սպառնալիք իր անվտանգության շահերին: Ռուսաստանի բացասական վերաբերմունքը ՆԱՏՕ-ի դեպի Արևելք ընդլայնմանն ակնհայտ էր, և նա դատապարտում էր ՆԱՏՕ-ի կողմից Կոսովոյի անկախության ճանաչումը և դեմ էր Վրաստանի և Ուկրաինայի անդամակցության ձգտումներին:

ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի միջև լարվածությունն ավելի սրվեց 2008 թվականին Ռուսաստանի և Վրաստանի միջև հակամարտությամբ, ինչը հանգեցրեց ՆԱՏՕ-ի կողմից դատապարտումների և երկու ուժերի միջև հարաբերությունների սրմանը: Փաստացի, ՆԱՏՕ-Ռուսաստան հարաբերությունները սրվեցին Վրաստանի հետ Ռուսաստանի պատերազմի պատճառով: Ավելի ուշ Հյուսիսատլանտյան խորհուրդը դատապարտեց Ռուսաստանին՝ Հարավային Օսիան և Աբխազիան անկախ պետություններ ճանաչելու համար (Statement by the North Atlantic Council on the Russian recognition of South Ossetia and Abkhazia regions of Georgia 2009): Չնայած ՆԱՏՕ-Ռուսաստան բանակցությունների միջոցով համագործակցությունը բարելավելու ջանքերին՝ մարտահրավերները պահպանվեցին՝ ներառյալ

տարածայնությունները Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության համակարգերի և Վրաստանում զորավարժությունների վերաբերյալ:

Այնուամենայնիվ, եղան նաև ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի միջև հարաբերությունները ջերմացնելուն ուղղված ջանքեր, որոնց օրինակը Օբամայի վարչակազմի որոշումն էր՝ չեղյալ համարել Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության համակարգի ծրագրերը, որոնք ուղղված էին Ռուսաստանի մտահոգությունները մեղմելուն:

Թեև ՆԱՏՕ-ի ընդլայնումը շարունակեց առաջընթաց գրանցել Խորվաթիայի և Ալբանիայի անդամակցությամբ, այն նաև բերեց բարդ աշխարհաքաղաքական դինամիկա և լարված հարաբերություններ Ռուսաստանի հետ: Չնայած այս մարտահրավերներին՝ ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի միջև համագործակցությունն ու երկխոսությունը բարելավելու ջանքերը շարունակվում են՝ ընդգծելով եվրատլանտյան տարածաշրջանում կայունության և անվտանգության պահպանման կարևորությունը:

2017 թվականից մինչև 2020 թվականն ընկած ժամանակահատվածում ՆԱՏՕ-ն ականատես եղավ Բալկաններում զգալի ընդլայնման՝ Չեռնոգորիայի և Հյուսիսային Մակեդոնիայի անդամակցությամբ: Չեռնոգորիայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին 2017 թ. տարիների ջանքերի և բանակցությունների գագաթնակետն էր՝ չնայած երկարատև հասարակական տարաձայնություններին և աշխարհաքաղաքական ճնշումներին: Չեռնոգորիան բացահայտ աջակցում էր բալկանյան երկրների անդամակցությանը ՆԱՏՕ-ին՝ հակադրվելով ռուսամետ և հենց ռուսական իշխանություններին: Քաղաքական գործիչները 46/0 ձայնային հարաբերակցությամբ ընդունել էին անդամակցության որոշումը և ոտքի կանգնած ծափահարել: Իհարկե, ռուսամետ գործիչները բոյկոտել էին, փորձել խանգարել քվեարկությանը և անդամակցությանը, սակայն դրանք անհաջող փորձեր էին (Montenegro ratifies Nato membership in historic shift to western alliance, 2017): Մայիսի 7-ին Չեռնոգորիայի պետական դրոշը բարձրացվեց ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում: Գլխավոր քարտուղարը բարձր է գնահատել Չեռնոգորիայի հավատարմությունը եվրաատլանտյան ինտեգրմանը և շնորհավորել Չեռնոգորիայի կառավարությանն ու ժողովրդին անկախության վերականգնման 11 տարիների ընթացքում ունեցած ձեռքբերումների համար (Flag-raising ceremony marks Montenegro’s entry into NATO 2017): Ընդունելով ՆԱՏՕ-ի անդամակցությունը՝ Չեռնոգորիան նպատակ ուներ ամրապնդելու իր անվտանգության ապարատը և խորացնելու ինտեգրումը արևմտյան կառույցների հետ:

Նմանապես, Հյուսիսային Մակեդոնիայի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու ճանապարհը լի էր խոչընդոտներով, մասնավորապես՝ Հունաստանի հետ երկրի անվանման երկարամյա վեճով: Այնուամենայնիվ, դիվանագիտական բանակցությունների և փոխզիջումների միջոցով Հյուսիսային Մակեդոնիան հաջողությամբ լուծեց վեճը և 2018 թվականին ՆԱՏՕ-ին միանալու հրավեր ստացավ: 2020թ. փետրվարի 11-ին Մակեդոնիայի խորհրդարանը համաձայնություն տվեց Հյուսիսատլանտյան պայմանագրին (North Macedonia parliament backs NATO accession 2020): Միանալու փաստաթուղթը ստորագրվեց մարտի 27-ին և Հյուսիսային Մակեդոնիան դարձավ անդամ պետություն: Դրոշի բարձրացման արարողությունը տեղի ուեցավ մարտի 30-ին և պաշտոնապես ազդարարեց նրա անդամակցությունը ՆԱՏՕ-ին: Այս կարևոր իրադարձությունը ոչ միայն ազդարարեց տարածաշրջանային դիվանագիտության առաջընթացը, այլև նշանակալի քայլ էր Բալկաններում կայունության և համագործակցության ամրապնդման ուղղությամբ:

Չեռնոգորիայի և Հյուսիսային Մակեդոնիայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին ցույց է տալիս դաշինքի շարունակական կարևորությունը Եվրոպայում խաղաղության և անվտանգության ապահովման գործում: Ավելին, այն ընդգծում է հավաքական անվտանգության պայմանավորվածությունների փոխակերպող ուժը՝ պատմական դժգոհությունները հաղթահարելու և տարածաշրջանային համագործակցությունը

խթանելու գործում: Նայելով ապագային՝ Չեռնոգորիայի և Հյուսիսային Մակեդոնիայի ինտեգրումը ՆԱՏՕ-ին, անկասկած, կնպաստի Բալկաններում ավելի մեծ անվտանգության և բարգավաճման: Այնուամենայնիվ, այն նաև ընդգծում է երկխոսության, համագործակցության և հաշտեցման շարունակական անհրաժեշտությունը՝ լուծելու բարդ քաղաքական և անվտանգության խնդիրները, որը շարունակում է ձևավորվել տարածաշրջանում:

Ֆինլանդիայի և Շվեդիայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին նշանակալի իրադարձություն է եվրատլանտյան անվտանգության և սկանդինավյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական շրջանակներում: Ֆինլանդիայի անդամակցությամբ 2023 թվականի ապրիլի 4-ին (Finland joins NATO as 31st Ally 2023), որին հաջորդում է Շվեդիայի անդամակցությունը 2024 թվականի մարտի 7-ին (Sweden officially joins NATO 2024) ՆԱՏՕ-ի ընդլայնումը Սկանդինավյան թերակղզում ընդգծում է հավաքական պաշտպանության և տարածաշրջանային կայունության ռազմավարական հրամայականը: Ռուսաստանի գործողությունները, մասնավորապես նրա ագրեսիան Ուկրաինայի նկատմամբ, առանցքային դեր խաղացին Ֆինլանդիայի և Շվեդիայի՝ ՆԱՏՕ-ին միանալու որոշումների վրա: Ռուսաստանի ինքնավստահությունից բխող սպառնալիքը խթանեց հասարակական աջակցությունը ՆԱՏՕ-ին անդամակցելու երկու երկրներում՝ ընդգծելով անվտանգության դաշինքների կարևոր դերը գնալով ավելի բարդացող և անկանխատեսելի դարձող աշխարհաքաղաքական միջավայրում: Ֆինլանդիայի և Շվեդիայի միանալը ուժեղացրել է ՆԱՏՕ-ի զսպման դիրքերը և ուժեղացրել անդամ երկրների անվտանգությունն ու ինքնիշխանությունը պաշտպանելու նրա կարողությունը: Այն վերահաստատում է Հյուսիսատլանտյան պայմանագրի 5-րդ հոդվածում ամրագրված հավաքական պաշտպանության սկզբունքը՝ ցույց տալով ՆԱՏՕ-ի հանձնառությունը՝ պաշտպանելու բոլոր անդամ պետություններին ցանկացած ագրեսիայից: Ավելին, Ֆինլանդիայի և Շվեդիայի ինտեգրումը ՆԱՏՕ-ին ընդգծում է դաշինքի հարմարվողականությունը՝ արձագանքելու զարգացող անվտանգության մարտահրավերներին: Նրանց անդամակցությունը մեծացնում է ՆԱՏՕ-ի ռազմավարական հասանելիությունը՝ ամրապնդելով դաշինքի կարողությունները՝ դիմակայելու առաջացող սպառնալիքներին և խթանելու կայունությունը Բալթիկ ծովում և Արկտիկայի տարածաշրջաններում:

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես պետականության համեմատաբար կարճաժամկետ փորձ ու անվտանգության հիմքային մարտահրավերներ ունեցող երկիր, իր ներուժը հնարավորինս օգտագործելով, անհատական ու հավաքական դաշինքային ձևաչափերում ամենատարբեր քայլեր է ձեռնարկում՝ համակողմանիորեն ապահովելու իր անվտանգությունն ու կայունությունը: Այս համատեքստում Հայաստանը ձգտում է հարաբերությունները զարգացնել ՆԱՏՕ-ի հետ, մտադիր է էլ ավելի ակտիվացնել գործնական և քաղաքական համագործակցությունը՝ դաշինքին մերձենալու նպատակով, սակայն, տարբեր պաշտոնական ու ոչ պաշտոնական գնահատումների հաշվառմամբ, Երևանն իր արտաքին քաղաքականության ձևաչափում նպատակ չի դնում անդամակցությունը Հյուսիսատլանտյան դաշինքին՝ շեշտադրելով ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսությունը պաշտպանության և անվտանգության բնագավառներում՝ որպես Հայաստանի պաշտպանական կարողությունների հզորացման բաղադրիչ (ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն 2020) :

Հարկ է նշել, որ Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների հետ ՆԱՏՕ-ն համագործակցում է ըստ դրանց ունեցած կարողությունների, անվտանգության ու պաշտպանության քաղաքական տեսլականի, ռազմաքաղաքական խնդիրների օրակարգի, արտաքին քաղաքական ուղեգծի: Դաշինքի հետ գործակցությունը կարևոր է հարավկովկասյան երկրների համար, քանի որ հնարավորություն է տալիս ՆԱՏՕ-ի հետ ձևավորելու անվտանգային ընդհանրական հետաքրքրություններ

ներառող օրակարգ, բարեփոխվելու և կայանալու ռազմաքաղաքական ոլորտում: ՆԱՏՕ-ն իր հերթին կարևորում է Հարավային Կովկասի աշխարհագրական դիրքն ահաբեկչության դեմ մղվող պայքարում, ինչպես նաև տարածաշրջանի տարանցման հնարավորություններն ու էներգետիկ պաշարները, ուստի շահագրգռված է տարածաշրջանի կանխատեսելի իրողություններով և քաղաքական կայունությամբ:

Որպես այդպիսին՝ Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունները սկզբնավորվել են 1992 թվականին, երբ Հայաստանը դարձավ Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդի (NACC) անդամ: ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի փոխհարաբերությունները խարսխված են Գործընկերություն հանուն խաղաղության (PFP) ծրագրի վրա, որին Հայաստանը միացել է 1994 թվականին: Բացի այդ, իրականացվում է ներգրավման ավելի բարձր աստիճան ապահովող փոխգործակցություն Եվրատլանտյան գործընկերության խորհրդի(EAPC) շրջանակներում, որին ՀՀ-ն անդամակցում է 1997 թվականից: 2002 թվականից Հայաստանը մասնակցում է Գործընկերություն հանուն խաղաղության ծրագրի Պլանավորման և վերանայման գործընթացին (PARP): 2006 թվականից Հայաստանի և ՆԱՏՕ-ի միջև գործընկերային հարաբերությունները և տարբեր բնագավառներում համագործակցությունը զարգանում են Հայաստան-ՆԱՏՕ Անհատական Գործընկերության Գործողությունների ծրագրի (ԱԳԳԾ) շրջանակներում (Relations with Armenia, North Atlantic Treaty Organization 2024):

Հայաստանի ու Դաշինքի հարաբերությունների անցած ուղին համապարփակ ու լիարժեք գնահատելու համար հարկ է դիտարկել ՀՀ-ՆԱՏՕ գործակցության անհատական ձևաչափը և տարածաշրջանային երկրներում առկա խնդիրներն ու արտաքին քաղաքական չափումները: Մասնավորապես, հարաբերությունների ընդհանուր միտումն ըմբռնելու ու դինամիկան վեր հանելու առումով ՀՀ-ի համար հատկապես կարևոր էր ՆԱՏՕ-ի դիրքորոշումը նաև ԼՂ հակամարտության կարգավորման հարցում: Դաշինքը պարբերաբար հայտարարել էր, որ մտադիր չէր ստանձնել ուղղակի դերակատարություն այդ գործընթացում՝ դա վերապահելով ԵԱՀԿ Մինսկի խմբի իրավասությանը: Միաժամանակ նշենք, որ Դաշինքն իր հիմնադիր անդամների՝ ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի միջոցով, որոնք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներ են, հետևում էր բանակցային գործընթացին, հակամարտության գոտում ռազմաքաղաքական զարգացումներին: Սակայն, օրինակ, ՆԱՏՕ-ի՝ 2008-2016թթ. մի շարք գագաթնաժողովներում ընդունած քաղաքական հռչակագրերում Հարավային Կովկասի հակամարտությունների վերաբերյալ տեղ գտան միակողմանի ձևակերպումներ, որոնք պայմանավորված էին հակամարտությունները «տարածքային ամբողջականության» սկզբունքով լուծելուն նախապատվություն տալու հանգամանքով: Փաստենք, որ ՆԱՏՕ-ի գագաթնաժողովների եզրափակիչ հռչակագրերում փոփոխություններ մտցնելու հայկական կողմի փորձերը սովորաբար դրական արդյունք չեն տվել: Լավագույն դեպքում «ազգերի ինքնորոշման» իրավունքը երբեմն տեղ էր գտել ձևակերպումներում, կամ հղում էր արվել ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքներին:

ՀՀ-ՆԱՏՕ հարաբերությունների համատեքստում անհրաժեշտ է նաև այդ հարաբերությունները դիտարկել «թուրքական» ու «ռուսական» արտաքին քաղաքական երկու չափումներում, որոնք ուղղակիորեն ազդում են Դաշինքի ու ՀՀ-ի հարաբերությունների որակի, խորության ու իրացման ներուժի վրա: ՀՀ-ՆԱՏՕ հարաբերությունների «թուրքական» չափումը արտացոլում է հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ Դաշինքի մոտեցումը, այսինքն՝ չնայած Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ երկիր է, սակայն փակ է պահում ՆԱՏՕ-ի գործընկեր երկրի հետ սահմանը, «կողմնակալ դիրքորոշում» որդեգրելով Հայաստանի մասով: Այս համատեքստում ՆԱՏՕ-ն և հատկապես ԱՄՆ-ը փորձել են և փորձում են աջակցել ՀՀ-ի ու Թուրքիայի հարաբերությունների կարգավորմանը: Օրինակ՝ ՆԱՏՕ-ի նախկին

գլխավոր քարտուղար Յ. Դե Հուպ Սխեֆերը դեռ 2007-2008թթ. փորձեց իր անձնական ներդրումն ունենալ հայ-թուրքական հարաբերությունների բարելավման գործում՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելով, սակայն այդ նախաձեռնությունն անարդյունք եղավ: Հետագայում, երբ գործընթացը դանդաղեց, Դաշինքն այս հարցի վերաբերյալ հրապարակային որևէ դիրքորոշում չհայտնեց:

Ինչ վերաբերում է ՀՀ-ՆԱՏՕ հարաբերություններում «ռուսական» չափմանը, ապա կարող ենք ասել, որ ՌԴ-ն ՆԱՏՕ-ի հետ ունի հարաբերման իր սկզբունքները, ուստի տրամաբանական է ու հիմնավոր, որ ՀՀ-ՆԱՏՕ հարաբերություններում դրսևորում է որոշակի նախանձախնդրություն: Այս համատեքստում նշենք, որ «ռուսական» արձագանքը ՀՀ-ՆԱՏՕ շփումների վերաբերյալ միշտ էլ պայմանավորված է եղել ՆԱՏՕ-ՌԴ հարաբերությունների որակով ու բնույթով: Եթե նախկինում դրանք ընդհանուր առմամբ տեղավորվում էին առավելապես գործակցային ձևաչափի մեջ, և տարակարծությունների հիմնական թեման դեպի արևելք ՆԱՏՕ-ի ընդլայնումն էր, ապա 2014թ. ուկրաինական ճգնաժամից և 2022թ.-ի ակտիվ հակամարտությունից հետո հարաբերությունների որակը շեշտակիորեն փոխվեց՝ վերածվելով սուր հակադրության:

Նման իրավիճակում ՀՀ-ն Դաշինքի հետ հարաբերություններում մի կողմից առաջնորդվում է իր ազգային շահերով, մյուս կողմից, չկտրվելով աշխարհաքաղաքական իրողություններից, փորձում է անհատական և հավաքական ձևաչափերում արդյունավետ գործակցություն ծավալել ՆԱՏՕ-ի հետ՝ հաշվի առնելով իր անվտանգության ոլորտի գործընկերների (ՌԴ) վերաբերմունքն ու դաշինքային (ՀԱՊԿ) պարտավորությունները:

Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության առանցքային ուղղություններից է նաև ՆԱՏՕ-ի կողմից կազմակերպված տարբեր զորավարժություններին և սեմինարներին ՀՀ ԶՈՒ-ի մասնակցությունը: Այդ միջոցառումներին Դաշինքի անդամ-պետություններից զատ մասնակցում էին նաև գործընկեր երկրների ներկայացուցիչները, ինչը նպաստում էր ոչ միայն Դաշինքի և գործընկեր պետությունների , այլ նաև ՆԱՏՕ-ին չանդամակցող տարբեր պետությունների միջև ռազմական ոլորտում փոխգործակցության հաստատմանը: ՀՀ ռազմաքաղաքական բարեփոխումների ոլորտներում կատարվում են հմտությունների փոխանցում, ուսումնառության, սպայական ու հրամանատարական կազմի համար վերապատրաստումներ: Հետևապես, ՆԱՏՕ-ի հետ ակտիվ գործակցությունը նպաստում է ՀՀ ռազմական անվտանգության ամրապնդմանը, ԶՈՒ արդյունավետության բարձրացմանը և միջազգային ներգրավվածության մեծացմանը:

«ՆԱՏՕ-ի Պաշտպանական կրթության զարգացման ծրագրի (Defence Education Enhancement Program - DEEP) շրջանակներում բազմաթիվ միջոցառումներ են պլանավորվել և իրականացվել դեռևս 2008թ. ի վեր՝ հիմնված ՀՀ ռազմակրթական ոլորտի զարգացմանը վերաբերող նպատակների վրա: Ընդհանուր առմամբ, յուրաքանչյուր տարի ՀՀ պաշտպանության նախարարության և «ՆԱՏՕ-ի Պաշտպանական կրթության զարգացման ծրագրի համագործակցության ամենամյա պլանով իրականացվում է միջինը 18-20 միջոցառում ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում: Որպես հիմնական միջոցառումներ կարելի է առանձնացնել հետևյալները.

- Օժանդակություն է ցուցաբերվել ՀՀ ռազմական կրթության ոլորտում իրականացվող քաղաքականության և ռազմավարության հիմունքների մշակման, ինչպես նաև սպայակազմի զարգացման փուլերի ու համապատասխան կրթական չափորոշիչների նախանշման գործում:
- Իրականացվում են ՀՀ ՊՆ համակարգում հեռավար տարաբաշխված ուսուցման (ADL) կարողություններ ներդնելու աշխատանքներ, ամենամյա կտրվածքով ՀՀ-ում և արտերկրում անց են կացվում ՌՈՒՀ-երի դասախոսական ու մեթոդական կազմերի վերապատրաստման դասընթացներ:

- DEEP-ի մասնագետները պարբերաբար ՀՀ ՊՆ ՌՈՒՀ-երում հանդես են գալիս դասախոսություններով՝ հիմնականում օպերատիվ արվեստի, արևմտյան և արևելյան ռազմական դպրոցների հիմնական տարբերությունների, առաջնորդության, ռազմական կառավարման և բարեվարքության առարկաների շրջանակներում:
- Կազմակերպվում են ՀՀ ՊՆ ՌՈՒՀ-երի ղեկավար և դասախոսական կազմերի ծանոթացման այցերը ՆԱՏՕ-ի անդամ և գործընկեր երկրների ՌՈՒՀ-եր՝ փորձի փոխանակման նպատակով:
- Իրականացվում է ՀՀ ՌՈՒՀ-երին շարունակական աջակցություն՝ դասախոսական կազմի ընտրության, վերապատրաստման և ուսումնական ծրագրերի կատարելագործման առումով:

Ժամանակի ընթացքում Հայաստանը խորացրել է իր ներգրավվածությունը ՆԱՏՕ-ի հետ դիվանագիտական ուղիներով՝ մասնակցելով հանդիպումներին, համաժողովներին և համատեղ նախաձեռնություններին, որոնք ուղղված են տարածաշրջանում անվտանգության և կայունության ամրապնդմանը: Այս դիվանագիտական աշխատանքը ներառում է վստահության ձևավորում, փոխըմբռնման խթանում և Հայաստանի և ՆԱՏՕ-ի անդամ երկրների միջև ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտների գործակցություն: Հայաստանի ներգրավվածությունը ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրում և նրա ներդրումը միջազգային խաղաղապահ ջանքերում ցույց են տալիս նրա նվիրվածությունը տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանը՝ նպաստելով եվրաատլանտյան տարածաշրջանում անվտանգության, համագործակցության և երկխոսության խթանմանն ուղղված ավելի լայն ջանքերին:

Եզրահանգումներ

Վերջնարդյունքում հարկ է ընդգծել, որ Հայաստան-ՆԱՏՕ համագործակցությունը՝ հատկապես խաղաղապահ առաքելությունների շրջանակներում, Հայաստանի համար ոչ այնքան անվտանգությունն ապահովելու նպատակներ է հետապնդում, որքան բարձրացնում է Հայաստանի միջազգային դերը, ինչպես նաև այս ուղին իր մեծ նպաստն է բերում Հայաստանի եվրոպական ինտեգրմանը: Հայաստանի Հանրապետությունը, համագործակցելով ՆԱՏՕ-ի հետ, իրականացնում է իր «ներգրավման» և «փոխլրացման» արտաքին քաղաքականությունը:

ՀՀ-ի համար ՆԱՏՕ-ի հետ հարաբերություններ հաստատելու, գործակցելու անհրաժեշտությունը հիմնավոր ու արդարացված էր ինչպես այդ ժամանակաշրջանի միջազգային քաղաքական իրողությունների տրամաբանության, այնպես էլ նորանկախ երկրի անվտանգության ու արտաքին քաղաքականության մեջ՝ նոր ու կարևոր ուղղություն որդեգրելու առումով: Հայաստանը համագործակցում է ՆԱՏՕ-ի հետ ճգնաժամերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում՝ բնական աղետների և տարբեր սպառնալիքների դեմ պայքարում Հայաստանի ճգնաժամային պատրաստվածության և աղետների նվազեցման կարողությունները զարգացնելու նպատակով: Հայաստան-ՆԱՏՕ գործընկերային համագործակցության նպատակն է դյուրացնել պաշտպանական և անվտանգության ոլորտներում բարեփոխումների անցկացման ընթացքը, ինչպես նաև զարգացնել Հայաստանի փոխգործակցության կարողությունները գործընկերների հետ: Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության կարևոր առաջնահերթություններից է ապահովել և ամրապնդել ՀՀ զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն. Դիմակայուն Հայաստան փոփոխվող աշխարհում». Հուլիս 2020թ., Միջազգային փոխգործակցության, անվտանգության և խաղաղության խթանում, էջ 19, https://bit.ly/3gNrfKa: Մուտք՝ 01.06.2025:
2. “Albania, Croatia join Nato alliance”. *Timesofmalta*, April 2, 2009, https://timesofmalta.com/article/albania-croatia-join-nato-alliance.251308. Accessed: 02.05.2025.
3. “Bucharest Summit Declaration” *Nato int*, Last updated: 05 Jul. 2022, https://www.nato.int/cps/en/natolive/official_texts_8443.htm. Accessed: 02.05.2025.
4. “Flag-raising ceremony marks Montenegro’s entry into NATO”. *Nato int*, Last updated: 07 Jun. 2017, https://www.nato.int/cps/en/natohq/news_144739.htm. Accessed: 17.05.2025.
5. “Finland joins NATO as 31st Ally”. *Nato int*, Last updated: 04 Apr. 2023, https://www.nato.int/cps/en/natohq/news_213448.htm. Accessed: 21.05.2025.
6. Larrabee Stephen. NATO's Eastern Agenda in a New Strategic Era, 2003, https://www.jstor.org/stable/10.7249/mr1744af.8. Accessed: 01.05.2025.
7. McCalla Robert B. “NATO's Persistence after the Cold War”. *The London School of Economics and Political Science*, International Organisations (IR203), https://www.studocu.com/en-gb/document/thelondon-school-of-economics-and-political-science/international-organisations/nato-reading-notes/5945864. Accessed: 04.05.2025.
8. “Montenegro ratifies Nato membership in historic shift to western alliance, 28 April, 2017”. *The Guardian*, https://www.theguardian.com/world/2017/apr/28/montenegro-ratifies-nato-membership-in-historic-shift-to-western-alliance. Accessed: 17.05.2025.
9. “North Macedonia parliament backs NATO accession”. *Apnews*, February 11, 2020, https://apnews.com/general-newsfd01ab91bdf0c09e065a614f2d718ad8. Accessed: 17.05.2025.
10. “Prague Summit Declaration”. *Nato int*, Last updated: 06 May. 2014, https://www.nato.int/cps/en/natohq/official_texts_19552.htm. Accessed: 02.05.2025.
11. “Relations with Armenia, North Atlantic Treaty Organization”. *Nato int*, Last updated: 29 May, 2024, https://www.nato.int/cps/en/natohq/topics_48893.htm. Accessed: 03.06.2025.
12. “Statement by the North Atlantic Council on the Russian recognition of South Ossetia and Abkhazia regions of Georgia”. Nato int, Last updated: 04 Mar. 2009, https://www.nato.int/cps/en/natohq/news_43517.htm?selectedLocale=en. Accessed: 15.05.2025.
13. “Sweden officially joins NATO”. *Nato int*, Last updated: 07 Mar. 2024, https://www.nato.int/cps/en/natohq/news_223446.htm. Accessed: 21.05.2025.
14. “The Accession of Poland, the Czech Republic and Hungary to NATO”. *Warsaw Institute*, 29 March 2021, https://warsawinstitute.org/accessionpoland-czech-republic-hungary-nato/. Accessed: 04.05.2025.

WORKS CITED

1. «HH Azgayin anvtangut'yan r'azmavarut'yun. Dimakayun Hayastan p'op'oxvogh ashxarhum»: Howlis 2020t'., Mijazgayin p'oxgorc'akcut'yun, anvtangut'yan ev xaghaghut'yan xt'anum, e'j 19 [“National Security Strategy of the Republic of Armenia: A Resilient Armenia in a Changing World.” July 2020, Promotion of International Cooperation, Security and Peace], https://bit.ly/3gNrfKa: Accessed: 01.06.2025: (in Armenian)

NATO ENLARGEMENT AS AN IMPORTANT DETERMINANT OF THE FOREIGN SECURITY POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA

MHER SHIRINYAN
National Academy of Science of the Republic of Armenia,
Institute of Philosophy, Sociology and Law,
Department of Political Science, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia

Armenia-NATO cooperation, especially within the framework of peacekeeping missions, pursues goals not so much to ensure security for Armenia as to enhance Armenia's international role, and this path also greatly contributes to Armenia's European integration. The Republic of Armenia, in cooperation with NATO, implements its foreign policy of "engagement" and "complementarity".

The purpose of this article is to analyze NATO's enlargement policy and the goal of its implementation, the process of countries' membership and the stages they went through, the importance of enlargement for the region and the countries, as well as to assess Armenia's security interests and position towards developments conditioned by the enlargement policy in this context.

To achieve the stated goal, the following objectives were put forward: to assess the importance of NATO in the post-Cold War world, to uncover the reasons for NATO's expansion policy, to analyze Russia's role in the NATO expansion process, as well as to study NATO-Russia relations and developments in the new security environment in Europe.

For Armenia, the need to establish relations and cooperate with NATO was well-founded and justified both in terms of the logic of the international political realities of that period, as well as in terms of adopting a new and important direction in the security and foreign policy of the newly independent country. Armenia cooperates with NATO in the areas of crisis management and civil protection to develop Armenia's crisis preparedness and disaster reduction capabilities in the fight against natural disasters and various threats. The goal of the Armenia-NATO partnership is to facilitate the process of implementing reforms in the defense and security sectors, as well as to develop Armenia's capabilities for cooperation with partners. One of the important priorities of Armenia-NATO cooperation is to ensure and strengthen democratic control of the Armenian armed forces.

From the perspective of Armenia's security, the theoretical and practical developments of Armenia-NATO relations can be distinguished in the following strategic directions:

1. The development of relations with that organization objectively stems from the interests of the Republic of Armenia, particularly in terms of diversification and separation of sub-sectors in the security sector.
2. It gives Armenia the opportunity to build relations with leading European and Atlantic countries on the foreign policy platform as well: to assimilate their positive experience in the field of security and military planning.
3. In the areas of military-political reforms in the Republic of Armenia, skills transfer, education, and training for officers and commanders are being carried out.
4. Cooperation with the Alliance complements the areas left out of the agenda of the RA-RF security cooperation.
5. This partnership enables the Republic of Armenia to play a more active role in local manifestations of the international security architecture, and thereby creates a basis for gaining experience in peacekeeping brigades.

6. In particular, the IPAP component regulates civil-military relations, outlines the fight against corruption in the army, makes public awareness in the security and military-defense sectors more effective, provides effective support for the preparation of conceptual documents, transfers new technologies and skills, and provides consulting in the field of cybersecurity, and makes the crisis management toolkit more effective.

Keywords: *security, enlargement, region, collective defense, defense policy, capability, threat, danger, conflict.*

РАСШИРЕНИЕ НАТО КАК ВАЖНЫЙ ФАКТОР ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

МГЕР ШИРИНЯН
соискатель кафедры политологии
Института философии, социологии и права
Национальной академии наук Республики Армения,
г. Ереван, Республика Армения

Сотрудничество Армения-НАТО, особенно в рамках миротворческих миссий, преследует цели не столько обеспечения безопасности Армении, сколько повышения международной роли Армении. Республика Армения в сотрудничестве с НАТО реализует свою внешнюю политику «вовлеченности» и «комплементарности».

Целью данной статьи является анализ политики расширения НАТО и целей ее реализации, процесса членства стран и пройденных ими этапов, значения расширения для региона и стран, а также оценка в этом контексте интересов безопасности и позиции Армении в отношении развитий, обусловленных политикой расширения.

Для достижения поставленной цели были поставлены следующие задачи: оценить значение НАТО в мире после окончания холодной войны, раскрыть причины политики расширения НАТО, проанализировать роль России в процессе расширения НАТО, а также изучить отношения между НАТО и Россией и развитие ситуации в новой среде безопасности в Европе.

Для Армении необходимость установления отношений и сотрудничества с НАТО была обоснованной и оправданной как с точки зрения логики международных политических реалий того периода, так и с точки зрения принятия нового и важного направления в политике безопасности и внешней политики новой независимой страны. Армения сотрудничает с НАТО в сферах управления кризисами и гражданской защиты для развития возможностей Армении по готовности к кризисам и сокращению стихийных бедствий в борьбе со стихийными бедствиями и различными угрозами. Целью партнерства Армения-НАТО является содействие процессу реализации реформ в сфере обороны и безопасности, а также развитие возможностей Армении для сотрудничества с партнерами. Одним из важных приоритетов сотрудничества Армения-НАТО является обеспечение и укрепление демократического контроля над вооруженными силами Армении.

С точки зрения безопасности Армении теоретическое и практическое развитие отношений Армения-НАТО можно выделить в следующих стратегических направлениях:

1. Развитие отношений с этой организацией объективно исходит из интересов Республики Армения, в частности, в плане диверсификации и разделения подсекторов в сфере безопасности.
2. Это дает Армении возможность выстраивать отношения с ведущими европейскими и атлантическими странами и на внешнеполитической платформе: усваивать их позитивный опыт в сфере безопасности и военного планирования.
3. В сфере военно-политических реформ в Республике Армения осуществляется передача навыков, обучение и подготовка офицеров и командиров.
4. Сотрудничество с Альянсом дополняет сферы, оставшиеся вне повестки дня сотрудничества в сфере безопасности РА-РФ.
5. Это партнерство позволяет Республике Армения играть более активную роль в локальных проявлениях архитектуры международной безопасности, тем самым создавая основу для приобретения опыта в миротворческих силах.
6. В частности, компонент IPAP регулирует гражданско-военные отношения, определяет борьбу с коррупцией в армии, повышает эффективность информирования общественности в секторах безопасности и обороны, оказывает эффективную поддержку в подготовке концептуальных документов, передает новые технологии и навыки, предоставляет консультации в области кибербезопасности и повышает эффективность инструментария управления кризисами.

Ключевые слова: *безопасность, расширение, регион, коллективная оборона, оборонная политика, потенциал, угроза, опасность, конфликт.*